«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածում.

1)վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 507. Դատական ակտը կամ հարկադիր կատարման ենթակա այլ ակտը չկատարելը կամ դրա կատարմանը խոչընդոտելը»:**

2)լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Օրենքով նախատեսված հարկադիր կատարման ենթակա այլ՝ սույն հոդվածի 1-ին մասում չներառված ակտի կատարմանը խոչընդոտելը, ինչպես նաև հարկադիր կատարողի սահմանած ժամկետում պարտապանի կամ նրա իրավասու անձի կողմից այն չկատարելը, եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ, կամ տվյալ ակտով արգելված գործողություն կատարելն այդ արգելքի գործողության ժամանակահատվածում՝

պատժվում է տուգանքով՝ հնգապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը ութսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ 6 ամիս ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

3) 2-րդ մասում «1-ին» բառից հետո լրացնել «կամ 1.1–ին մասերով» բառերը:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից մեկ ամիս հետո: